ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՇԱԳՐՄԱՆ

Երևան, 2024թ.

Հապավումներ

ԿԲՆ	Կլիմայական բյուջետային ծախսերի նշագրում
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ՊՄ	Պետական մարմիններ
ՋԳ	Ջերմոցային գազեր
ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն

Բովանդակություն

Հապավումներ 2

Բովանդակություն 3

1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ 4

2. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՇԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 4

3. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6

4. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՇԱԳՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 7

5. ՄԱՍ 1. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ 8

Հարցաշար 1. Կլիմայի փոփոխությանն առնչվող միջոցառումների նույնականացում 9

Աղյուսակ 1. Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների տիպաբանություն 10

6. ՄԱՍ 2. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿՈԴԱՎՈՐՈՒՄ 20

6.1. Կլիմայական դասիչի՝ քաղաքականության բաղադրիչի որոշում 21

6.2. Կլիմայական դասիչի՝ կլիմայի փոփոխությանն առնչության բաղադրիչի որոշում 25

Հարցաշար 2. Կլիմայի փոփոխության առնչության մակարդակի որոշման և կշիռների որոշման հարցաշար 29

7. ՄԱՍ 3. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 32

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 33

Հավելված 1. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԿՇԻՌՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ) ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 34

Հավելված 2. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ՝ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԴԱՍԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ 35

1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն ուղեցույցի նպատակն է ուղղորդել պետական մարմիններին բյուջետային գործընթացի շրջանակներում կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծախսերի նշագրման գործընթացում՝ նկարագրելով օգտագործվող հիմնական հասկացությունները և սահմանելով գործընթացի յուրաքանչյուր փուլում ՊՄ-ների կողմից կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծրագրերի և միջոցառումների նույնականացման, դասակարգման և համապատասխան ծախսերի գնահատման համար անհրաժեշտ քայլերը և տրամաբանությունը:

Ուղեցույցը նախատեսված է ՊՄ այն ստորաբաժանումների/աշխատակիցների համար, ովքեր անմիջականորեն ներգրավված են բյուջետային ծրագրերի, միջոցառումների, հայտերի մշակման, վերլուծության և քննության, դրանց վերաբերյալ որոշումների կայացման, ԿՓ առնչվող բյուջետային ծախսերի նույնականացման և գնահատման գործառույթներում:

Ուղեցույցը չի փոխարինում ՖՆ կողմից պետական մարմիններին տրամադրվող ՄԺԾԾ և բյուջետային հայտերի կազմման մեթոդական ցուցումներին, կամ այդ ոլորտում գործող իրավական ակտերին, այլ լրացնում է դրանց՝ ԿՓ առնչվող ծախսերի մասով: Սույն ուղեցույցը տարածվում է բյուջետային բոլոր ծրագրերի և միջոցառումների վրա:

2. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՇԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Կլիմայական բյուջետային ծախսերի նշագրումը բյուջետային համակարգում ԿՓ մեղմման և հարմարվողականության հետ կապված քաղաքականության միջոցառումների և դրանց շրջանակներում իրականացվող կլիմայական ծախսերի նույնականացման և չափման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս գնահատել և մշտադիտարկել այդ ծախսերը:

ԿՓ մեղմման և հարմարվողականության նպատակներն ու քաղաքականության միջոցառումները մեծապես խաչվում են այլ ոլորտային զարգացման քաղաքականությունների և նպատակների հետ, և ըստ այդմ, դրանց նույնականացումը խնդրահարույց է բյուջետային կառավարման ավանդական համակարգերի համար, որոնք սովորաբար կառուցված են բյուջետային ծախսերի գերատեսչական, տնտեսագիտական և գործառական դասակարգումների շուրջ: Բյուջետային կառավարման ավանդական համակարգերը և դասակարգումները հնարավորություն չեն տալիս ուղղակիորեն բացահայտել/նույնականացնել խաչվող ոլորտներում (ԿՓ, գենդերային հավասարություն, աղքատության կրճատում, կայուն զարգացման նպատակներ և այլն) իրականացվող բյուջետային ծախսերը, քանի որ այդ քաղաքականություններին առնչվող ծախսերը տարածվում են բազմաթիվ պետական մարմինների և գործառական ոլորտների վրա և ներկայացվում են տվյալ ոլորտում քաղաքականության նպատակներին համապատասխան կերպով: Դա իր հերթին բարդացնում է բյուջետային գործընթացի շրջանակներում խաչվող քաղաքականությունների գծով ծախսերի և արդյունքների պլանավորումը, բյուջետավորումը

և հաշվետվողականությունը: Բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգումը (ծրագրային բյուջետավորման համակարգի պարագայում) մասամբ լուծում է այդ խնդիրը, քանի որ այն արտացոլում է բյուջետային միջոցառումների/ծախսերի խմբավորումն ըստ քաղաքականության նպատակների: Այդուհանդերձ, խաչվող քաղաքականությունների պարագայում ծրագրային դասակարգումը ևս ունի սահմանափակումներ:

Խաչվող քաղաքականությունների գծով արդյունքները, ինչպիսիք են, օրինակ՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը կամ ԿՓ հարմարվողականության բարձրացումը, հիմնականում ապահովվում են տարբեր ոլորտային քաղաքականությունների շրջանակներում իրականացվող և այդ ոլորտային քաղաքականությունների նպատակներին միտված բյուջետային միջոցառումների միջոցով, որոնք սովորաբար ներկայացված են ոլորտային զարգացման նպատակների շուրջ կառուցված բյուջետային ծրագրերում և հաճախ բավարար չափով չեն բացահայտում խաչվող քաղաքականությունների արդյունքները: Օրինակ, ԿՓ մեղմման միջոցառումների մի մասը սովորաբար տարալուծվում է էներգետիկայի, գյուղատնտեսության, տրանսպորտի և այլ ոլորտների ծրագրերում, որոնք հետապնդում են հիմնականում համապատասխան ոլորտային զարգացման նպատակներ, թեև դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումների մի մասն ունեն մեծ կլիմայական ազդեցություններ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ բյուջետային ծրագրի հիմնական նպատակը անմիջականորեն ԿՓ մեղմումը կամ հարմարվողականության բարձրացումն է:

ԿԲՆ նպատակն է նույնականացնել, քարտեզագրել տարբեր գերատեսչությունների կողմից ոլորտային զարգացման ծրագրերի շրջանակներում իրականացվող այն բյուջետային միջոցառումները և ծախսերը, որոնք միտված են կամ նպաստում են ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների նպատակներին և որպես գործընթացի արդյունք՝ գնահատել ԿՓ առնչվող պետական բյուջետային ծախսերի մեծությունը: Բյուջետային գործընթացում ԿԲՆ համակարգային կիրառումը թույլ է տալիս.

- բյուջետային հատկացումները համապատասխանեցնել ԿՓ քաղաքականության առաջնահերթություններին՝ ԿՓ հարցերը ներառելով պլանավորման և բյուջետավորման համակարգում,
- կլիմայական ծախսերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման միջոցով բարձրացնել հաշվետվողականությունը և թափանցիկությունը կլիմայական ծախսերի և արդյունքների վերաբերյալ,
- միջազգային պարտավորությունների/հանձնառությունների համատեքստում ապահովել կլիմայի ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվողականություն:

3. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն ուղեցույցում օգտագործվող հիմնական հասկացությունները և դրանց սահմանումները ներկայացված են ստորև.

Կլիմայի փոփոխության մեղմում՝ տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների ամբողջություն՝ ուղղված ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը կամ կլանիչների ընդլայնմանը կամ զարգացմանը:

Կլիմայի փոփոխությանը հարմարվողականություն՝ կլիմայի փաստացի և կանխատեսվող փոփոխությանը հարմարվելու կարողություն՝ վնասները նվազեցնելու, անբարենպաստ հետևանքները մեղմելու և հնարավորություններից օգտվելու համար:

Կլիմայի փոփոխությանն առնչվող միջոցառումներ (կլիմայական միջոցառումներ)՝ բյուջետային ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներ, որոնք ուղղակիորեն միտված են կամ նպաստում են կլիմայի փոփոխության մեղմմանը կամ հարմարվողականության բարձրացմանը:

Կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծախսեր (կլիմայական ծախսեր)՝ բյուջետային ծրագրերի/միջոցառումների շրջանակներում իրականացվող ծախսեր, որոնք միտված են կամ նպաստում են կլիմայի փոփոխության մեղմմանը կամ հարմարվողականության բարձրացմանը:

Կլիմայական բյուջետային ծախսերի նշագրում՝ բյուջետային համակարգում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հետ կապված քաղաքականության միջոցառումների և դրանց շրջանակներում իրականացվող կլիմայական ծախսերի նույնականացման, դասակարգման և գնահատման կանոնակարգված գործընթաց:

Կլիմայական ծախսերի դասակարգիչ՝ կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծախսերի նույնականացման, խմբավորման և ներկայացման նպատակով կիրառվող դասակարգում:

Կլիմայական դասիչ՝ հինգ նիշից բաղկացած թվային կոդավորման համակարգ:

Կլիմայական դասիչի քաղաքականության բաղադրիչ՝ հինգ նիշից բաղկացած կլիմայական դասիչի առաջին երեք նիշերի ամբողջություն: Ներկայացնում է տվյալ միջոցառման՝ կլիմայի փոփոխության ազդեցության ուղղությունը, ոլորտը և ենթաոլորտը:

Կլիմայական դասիչի կլիմայական փոփոխությանն առնչության մակարդակն արտահայտող բաղադրիչ՝ հինգ նիշից բաղկացած կլիմայական դասիչի վերջին երկու նիշերը ներկայացնում են առնչության մակարդակը, ինչպես նաև համապատասխան կշիռը:

Կլիմայական ծախսերի գործակից/կշիռ՝ թվային գործակից, որն արտահայտում է կլիմայական ծախսերի մասնաբաժինը կլիմայի փոփոխությանն առնչվող միջոցառման ընդհանուր ծախսերում:

4. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՇԱԳՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Բյուջետային ծրագրերի միջոցառումների՝ ԿՓ առնչությունը և դրա մակարդակը որոշվում է սույն մեթոդաբանության հիման վրա՝ ԿԲՆ իրականացնող անձի/փորձագետի մասնագիտական դատողություններով, որոնք պետք է հիմնվեն և հիմնավորվեն բյուջետային ծրագրի/միջոցառմանն առնչվող պաշտոնական փաստաթղթերում (իրավական ակտեր, ռազմավարական փաստաթղթեր, բյուջետային փաստաթղթեր (այդ թվում՝ ծրագրերի անձնագրեր), պայմանագրեր և այլն) առկա տեղեկատվությամբ:

ԿԲՆ գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից (քայլերից).

Գծապատկեր 1. ԿԲՆ գործընթացի քայլերի հաջորդականությունը

1) Կլիմայական ծախսերին առնչվող միջոցառումների **նույնականացման** փուլում բացահայտվում են այն միջոցառումները, որոնք պետք է անցնեն ԿԲՆ գործընթացի 2-րդ և 3-րդ փուլերով և որոնց համար պետք է որոշվեն ԿՓ առնչության մակարդակը՝ որոշակի կշռի կամ գործակցի սահմանման միջոցով.

2) Կլիմայական ծախսերին առնչվող միջոցառումների **դասակարգման** փուլում բացահայտվում է յուրաքանչյուր միջոցառման առնչության ուղղությունը, ԿՓ առնչության կամ ազդեցության մակարդակը և վերջինիս համապատասխանող կշիռը: Նշված դասակարգումն արտահայտվում է կլիմայական դասիչի մեջ, որն էլ ցույց է տալիս տվյալ միջոցառմանը համապատասխանող կշռի մեծությունը.

3) Կլիմայական ծախսերի **գնահատման** փուլը բյուջետային միջոցառումների հատկացումների կամ ծախսերի փաստացի մեծությունների և դասակարգման միջոցով դրանց տրված համապատասխան կշիռների համադրությամբ իրականացվող գործողություն է, որի արդյունքում ստացվում է կլիմայական ծախսերի գնահատականը: Վերջինիս միջոցով հնարավոր կլինի նաև հաշվարկել կլիմայական ծախսերի գործակիցը կամ դրանց կշիռն ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ:

Հաջորդ բաժինները ներկայացնում են այն գործիքները, քայլերը և տրամաբանությունը, որոնք անհրաժեշտ է կիրառել պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համար ԿԲՆ իրականացնելիս:

Նշված փուլերին համապատասխան՝ ուղեցույցը բաղկացած է 3 մասերից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է տվյալ փուլի նպատակներին և տրամաբանությանը համապատասխանող աղյուսակներ (դասակարգումներ) և հարցաշարեր, որոնք ԿԲՆ իրականացնելու կիրառական գործիքներն են:

5. ՄԱՍ 1. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Սկզբնական նույնականացումը նպատակ ունի բացահայտել այն միջոցառումները, որոնք առնչություն ունեն ԿՓ հետ, մասնավորապես՝ ունեն ԿՓ մեղմման հատկանիշներ կամ ԿՓ հարմարվողականության բարձրացման հատկանիշներ:

Սույն ուղեցույցի հաջորդ մասերում ներկայացված քայլերի և գործողությունների միջոցով կբացահայտվեն այդ միջոցառումների գծով ԿՓ առնչության ուղղությունը, մակարդակը, կխմբավորվեն ըստ առնչության մակարդակի առանձին խմբերում և կվերագրվեն համապատասխան կշիռներ, որոնք կօգտագործվեն կլիմայական բյուջետային ծախսերի գնահատման համար:

Գծապատկեր 2. ԿԲՆ գործընթացի քայլերի հաջորդականությունը

ԿՓ առնչվող միջոցառումների բացահայտման համար անհրաժեշտ է օգտվել հաջորդիվ ներկայացված նույնականացման հարցաշարից (Հարցաշար 1.):

Հարցաշար 1. Կլիմայի փոփոխությանն առնչվող միջոցառումների նույնականացում

1. Արդյո՞ք միջոցառումն անմիջականորեն ներառված է կլիմայի փոփոխության ոլորտում քաղաքականությունը սահմանող առանցքային փաստաթղթերում (տես Ծանոթագրություն 1, կետ 1):

   ☐ այո

   ☐ ոչ

2. Արդյո՞ք միջոցառման նպատակների շարքում նշվում է (տե՛ս Ծանոթագրություն 1, կետ 2) կլիմայի փոփոխության մեղմումը կամ կլիմայի փոփոխությանը հարմարվողականության մակարդակի բարձրացումը:

   ☐ այո

   ☐ ոչ

3. Արդյո՞ք միջոցառումը պարունակում է գործողություններ, որոնք ներառված են կլիմայի փոփոխությանն առնչվող միջոցառումների նույնականացման տիպաբանությունում (տես Ծանոթագրություն 1, կետ 3):

   ☐ այո

   ☐ ոչ

4. Արդյո՞ք միջոցառումն ազդում է կլիմայի փոփոխության մեղմման և/կամ հարմարվողականության վերջնական արդյունքների վրա:

   ☐ այո

   ☐ ոչ

Այն միջոցառումները, որոնց համար վերը նշված բոլոր հարցերի պատասխանները բացասական են, համարվում են կլիմայի փոփոխությանը առնչություն չունեցող միջոցառումներ, հետևաբար, դրանք չեն ներառվի ԿԲՆ հետագա աշխատանքներում: Այդ ծախսերին ԿԲՆ ենթատեքստում կվերագրվի 0% կշիռ:

Ծանոթագրություն 1.

1. Կլիմայի փոփոխությանն առնչվող քաղաքականության առանցքային փաստաթղթերն են.

   - Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողություններ (հաստատված ՀՀ կառավարության 22.04.2021թ. թիվ 610-Լ որոշմամբ),
   - ՀՀ ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն (հաստատված ՀՀ կառավարության 28.12.2023թ. թիվ 2318-Լ որոշմամբ),
   - Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիր և 2021-2025թթ. միջոցառումների ցանկ (հաստատված ՀՀ կառավարության 13.05.2021թ.N 749-Լ որոշմամբ)

2. Բյուջետային ծրագրի նպատակը սահմանվում է «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում (Հավելված 1, Աղյուսակ 2): Ծրագրում ներառված միջոցառումներն ուղղվում են նույն նպատակին: Սույն հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է օգտագործել ԱԺ կողմից հաստատված վերջին (նախորդ տարվա) օրենքը: Օրինակ, 2025թ. պետական բյուջեի բյուջետային հայտերի կազմման ընթացքում ԿԲՆ իրականացման համար այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է օգտագործել 2024թ. պետական բյուջեի վերը նշված Հավելվածում տվյալ միջոցառման համար նույն ծրագրի մակարդակով նշված նպատակը:

3. Աղյուսակ 1-ը ներկայացնում է ԿՓ առնչվող գործողությունների տիպաբանությունը, որն անհրաժեշտ է օգտագործել Հարցաշար 1-ի Հարց 3-ին պատասխանելու համար: Այն ներկայացնում է միջոցառումների լայն շրջանակ, որոնք դասակարգված են ըստ ԿՓ առնչության ուղղության, ոլորտի, ենթաոլորտի (քաղաքականության ուղղության) և նպատակի: Գործողությունների օրինակների նկարագրությունը ներառում է նաև բացատրություն, թե ինչպիսի ազդեցություն է ակնկալվում տվյալ գործողության իրականացումից, ինչը թույլ է տալիս նույն տրամաբանության մեջ դիտարկել նաև տիպաբանության մեջ չներառված միջոցառումներ, որոնք կարող են ի հայտ գալ հետագայում:

Աղյուսակ 1. Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների տիպաբանություն

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
ՄԵՂՄՈՒՄ			
Էներգետիկա	Էներգիայի արտադրության մեջ արտանետումների կրճատում (էներգիայի սպառմանը անդրադարձ է կատարվում այլ բաժիններում)	Վերականգնվող էներգիա	Քամու էներգիա, արեգակի էներգիա, կենսաէներգիա, հիդրոէներգետիկան և երկրաջերմային էներգիա, եթե դրանք նվազեցնում են արտանետում-ները՝ ինչպես ցանցի ներսում, այնպես էլ ցանցից դուրս և սեփական կարիք-ների համար արտադրված էներգիայի սպառում
		Արտանետումային ցածր հզորություն	Ցածր արտանետումներ ապահովող (կամ ջերմային գազերի արտանետում-ները հետ կորզող տեխնոլոգիայով) ջերմային էլեկտրակայան, համակցված ցիկլով էներգիայի արտադրությունն օբյ, գործող ջերմաէլեկտրակայանների էներգաարդյունավետության բարելավում
		Վերականգնվող էներգիայով ջեռուցում և կերակրի պատրաստում	Արևային ջրատաքացում, երկրաջեր-մային աղբյուրներով ջեռուցում, կենսաէներգիայից ստացված ջերմություն (եթե կայուն աղբյուր է)
		Ավելի ցածր արտանետումներ ջեռուցման և կերակրի	Գազաֆիկացում և էներգիայի այլ աղբյուրների փոխարինում: Օգտակար էներգիայի արտադրության արդյունավետության բարձրացում:

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
		պատրաստման արդյունքում	
		Էներգիայի փոխանցում և բաշխում	Նոր, ընդլայնված և կատարելագործ-ված փոխանցման և բաշխման համակարգեր, արդիականացված փոխանցման և բաշխման համակար-գեր, որոնք նվազեցնում են կորուստ-ները և / կամ բարելավում են ցանցի կայունությունը. էլեկտրաէներգիայի պահպանման համակարգեր (մարտկոցներ, պոմպային պահեստներ և այլն), խելացի ցանցեր
		Ածխածնի կլանում, օգտագործում և պահպանում	Էներգիայի արտադրության աղբյուրներից ածխածնի կլանման, օգտագործման և պահպանման հետ կապված հետազոտական, մշակման և տեղակայման աշխատանքներ
Տրանսպորտ	Տեղափոխման հետ կապված արտանետումների նվազեցում	Քաղաքային տրանսպորտ	Քաղաքային նոր հանրային տրանս-պորտ (թեթև երկաթուղային, մետրո, տրոլեյբուս/տրամվայ և այլն), ակտիվ տրանսպորտ (հետիոտն և հեծանվային տեղաշարժի խթանում), տարանցիկ բեռնափոխադրումների տրանսպորտային շարժակազմի փոխարինում ավելի արդյունավետ կամ ավելի ցածր ածխածնային վառելիք օգտագործող այլընտրանք-ներով, նոր հանրային տրանսպոր-տային փոխադրամիջոցների ներդրում, որոնք արտանետումների գոյություն ունեցող ստանդարտների համեմատ ավելի արդյունավետ են
		Միջքաղաքային տրանսպորտ	Բարելավումներ կամ ենթակառուց-վածքների նոր կարողություններ, որոնք ապահովում են ճանապարհային (կամ օդային) երթևեկությունից անցում դեպի երկաթուղային, ավտոբուսային կամ ջրային երթևեկության միջոցների, շարժակազմի փոխարինում ավելի արդյունավետ կամ ավելի ցածր ածխածնային վառելիք օգտագործող այլընտրանքներով. նոր շարժակազմի ներդրում, որը գերազանցում է արտանետումների առկա ստանդարտները
		Ավիացիա	Օդանավերի փոխարինում ավելի արդյունավետ կամ ավելի ցածր ածխածնային վառելիք օգտագործող այլընտրանքներով. նոր օդանավերի ներդրում, որոնք գերազանցում են

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
			արտանետումների առկա ստանդարտները
		Վառելիք և ճանապարհային տրանսպորտային միջոցներ	Ավտոմեքենաների փոխարինում ավելի արդյունավետ կամ ավելի ցածր ածխածնային վառելիք օգտագործող այլընտրանքներով. նոր ավտոմեքենա-ների ներդրում, որոնք գերազանցում են արտանետումների առկա ստան-դարտները. վառելիքի արտանետու-մային ինտենսիվությունը նվազեցնող վառելիքի ստանդարտների ներդրում
		Տրանսպորտային համակարգի կառավարում	Տրանսպորտի և քաղաքաշինության տարածքային պլանավորման ինտեգ-րում, որոնք հանգեցնում են մարդա-տար ավտոմեքենաների կրճատմանը, օր.՝ բազմամոդալ տրանսպորտային հանգույցներ, պահանջարկի կառա-վարման միջոցառումներ, ինչպիսիք են բարձր ուղևորատարողունակությամբ տրանսպորտային միջոցների գծերը, ցածր արտանետման գոտիները (տրանսպորտային միջոցների կողմից), լիցքավորման կամ ցածր արտանետումները խթանող այլ ենթակառուցվածքները
Կառուցված միջավայր	Արտանետումների կրճատումներ՝ պայմանավորված կառուցված միջավայրի կառուցման և օգտագործման եղանակով	Շենքեր	Լուսավորության էներգաարդյունա-վետության բարելավում (գործող շենքերում), սարքերի և սարքավորում-ների էներգաարդյունավետության բարելավում (գործող շենքերում), էներգիայի կառավարման համակար-գերի տեղադրում (գործող շենքերում), էլեկտրաէներգիայի ավելացման համար համատեղ գեներացման կայանների ներդրումգործող շենքե-րում), շենքերի վերազինում՝ էներգախնայողության բարելավման համար (գործող շենքերում), օրենսդ-րական չափանիշները գերազանցող շենքերի բարձր արդյունավետ նախագծերի և կառուցման տեխնոլո-գիաների օգտագործում (նոր շենքերում), իրավական նորմատիվ-ները գերազանցող նոր սարքերի և սարքավորումների ներդրում (նոր շենքերում), էներգետիկ աուդիտ:
		Հանրային ծա-ռայություններ	Փողոցային լուսավորության, ջրի մատակարարման և այլ էներգատար կոմունալ ծառայությունների

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
			էներգաարդյունավետության բարելավում
		Այլ	Քաղաքաշինական և հողօգտագործ-ման փոփոխություններ՝ հողի ավելի կոմպակտ կամ ավելի արդյունավետ օգտագործումը խթանելու համար
Գյուղա-տնտեսություն	Բուսաբուծության և անասնապահության արտանետումների կրճատում	Հողերի օգտագործում և կառավարում	Գյուղատնտեսական համակարգում միջոցառումներ, որոնք բարելավում են գյուղատնտեսական համակարգերից բխող արտանետումները և դրանցում առկա ածխածնի պահուստները, օրինակ՝ խոր վարի տեխնոլոգիայով գյուղատնտեսություն, դեգրադացված հողերի վերականգնում, պարարտա-նյութերի օգտագործման նվազեցմանն ուղղված միջամտություններ, կայուն կենսազանգվածի և կենսավառելիքի / արտադրություն, սննդի պահեստավոր-ման կարողությունների բարելավում
		Անասուններ	Միջամտություններ, որոնք նվազեց-նում են մեթանի կամ ջերմոցային գազերի այլ արտանետումները. օր՝ կենդանիների առողջության պլանավո-րումը, կենդանիների կերակրման եղանակների փոփոխությունը, գոմաղբի կառավարումը, հանդակների կառավարումը
		Էներգաարդյունավե-տություն	Ոռոգման և ջրի պոմպային մղման, հերկման և այլ գյուղատնտեսական աշխատանքներում էներգիայի օգտագործման կրճատում, ներառյալ գյուղատնտեսական մեքենաների փոխարինում և արդիականացում
Արդյունա-բերություն և արդյու-նաբերական գործընթացներ	Արդյունաբերական և հովացման գործընթացների արտանետումների կրճատում	Էներգաարդյունավե-տություն	Ավելի արդյունավետ սարքավորում-ների տեղադրում, առկա օբյեկտներում գործընթացների փոփոխություններ, առկա օբյեկտներում ջերմության կորուստների նվազում, հին սարքավորումների նորերով փոխարինում, էներգետիկ աուդիտ
		Ածխածնի կլանում, օգտագործում և պահպանում	Արդյունաբերական ձեռնարկություն-ներում ածխածնի կլանման, օգտագործման և պահպանման հետ կապված հետազոտական, մշակման և տեղակայման աշխատանքներ
		Արդյունաբերական գործընթացներ	Արդյունաբերական գործընթացների բարելավումներ, որոնք հանգեցնում են ցածր CO2 արտանետումների, օրինակ՝ ցեմենտի մեջ կլինկերի փոխարինում,

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
			այլընտրանքային կլինկերի օգտագործում
		Օդորակում և հովացում	Գլոբալ տաքացման ավելի ցածր ներուժ ունեցող հովացման միջոցների անցում, բնական հովացման մեթոդների ներդրում
Թափոններ	Թափոնների հավաքման, վերամշակման և օգտահանման արտանետումների կրճատում	Կոշտ թափոնների կառավարում և վերամշակում	Թափոնների կառավարման նախագծեր՝ ուղղված մեթանի որսման/այրմանը, թափոնից էներգիայի ստացման նախագծեր, թափոնների հավաքման, վերամշակման և կառավարման գործողություններ, որոնք նվազեցնում են ջերմոցային գազերի արտանետումները
		Կեղտաջրերի մաքրում	Կեղտաջրերի մաքրման եղանակներ, որոնք նվազեցնում են ջերմոցային գազերի արտանետումները (ապակենտրոնացված համակարգերի փոխարինում կենտրոնացված համակարգերով), կեղտաջրերի տիղմի անաէրոբ քայքայում
		Գյուղատնտեսական թափոններ	Գյուղատնտեսության կենսաթափոն-ների հավաքում և օգտագործում (կենսագազ, բագաս) ներառյալ պարարտանյութի նպատակներով
Հողօգտա-գործում և անտառտն-տեսու-թյուն	Արտանետումների կրճատում՝ հողերի օգտագործման օրինաչափություն-ների փոփոխման և դրանց կառավար-ման, ինչպես նաև ածխածնի պաշարների ընդլայնման միջոցով[1]	Անտառային տնտեսություն	Անտառապատում, անտառվերականգ-նում, անտառների կայուն կառավա-րում, որը նպաստում է ածխածնի պաշարները մեծացմանը (այդ թվում՝ հրդեհների կառավարման միջոցով), անտառների պահպանման և վերա-կանգնման ծրագրեր, որոնք նվազեց-նում են անտառահատումից կամ դեգրադացիայից արտանետումները
		Այլ	Ածխածնի կլանիչ հանդիսացող այլ էկոհամակարգերի պահպանում, կառավարում և վերականգնում, ապահովելու «հողերի զրոյական դեգրադացիան»
Խաչվող հարցեր	Արտանետումների նվազեցման վերաբերյալ կրթական, հետազոտական աշխատանքների, պլանավորման և	Կրթություն և իրազեկում	ԿՓ մեղմման ուղղությամբ կրթություն և վերապատրաստում
		Քաղաքականություն և կարգավորում	Արտանետումների կրճատումների ապահովմանն առնչվող ազգային կամ ոլորտային հատուկ քաղաքականու-թյուններ, ծրագրեր, կանոնակարգեր. Արտանետումների ՄՀՀ

[1] Բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կապված են գյուղատնտեսական համակարգերի հետ:

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
	քաղաքականության ապահովում	Ֆի նանսներ	Ածխածնի ֆինանսավորման հետ կապված գործողություններ կամ որոնք այլ կերպ նպաստում են արտանետում-ների կրճատման հնարավորություն-ների ֆինանսավորմանը
		Հետազոտություն	Վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության կամ ցածր ածխածնային տեխնոլոգիաների հետազոտություն
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			
Բնական էկոհամա-կարգեր և կենսաբազմա-զանություն	Էկոհամակարգերի և կենսաբազմազանու-թյան պահպանում	Անտառներ	Անտառապատում և ագրոանտառա-տնտեսություն, անտառվերականգնում, անտառների կայուն կառավարում (ուղղված է անտառների կլիմայական դիմակայունության մեծացմանը), անտառների պահպանման և վերականգնման ծրագրեր, որոնք նվազեցնում են անտառահատումները կամ անտառների դեգրադացիան
		Բնական կենսավայրերի պաշտպանություն	Պահպանվող տարածքների, այդ թվում՝ Ազգային պարկերի զարգացում և շարունակական շահագործում, կառավարում և պահպանում
		Պաշտպանություն անապատացումից	Տարածվող թփերից մաքրում, ավազային դյուների կայունացում և բուսականության վերականգնման այլ գործողություններ. դեգրադացված հողերի վերականգնման աշխատանքներ
Ջրային ռեսուրսներ	Ջրի ռացիոնալ և կայուն օգտագործում և պաշտպանություն հեղեղումներից	Ջրամատակարարման և ջրահեռացման ապահովում	Ջրի ամբարման լրացուցիչ հզորու-թյունների կառուցում, պոմպակայան-ների արդյունավետության բարձրա-ցում, խողովակների արդիականացում /փոխարինում, ջրհեղեղներից պաշտպանության/ջրի մաքրման կայանի ջրամեկուսացում, նոր ենթակառուցվածք՝ ջրի արտադրու-թյան, մշակման կամ մաքրման օբյեկտների միջև ջրի և կեղտաջրերի փոխանցումը ապահովելու նպատակով
		Ջրի որակ	Ջրի որակի բարելավման միջոցառումներ
		Ոռոգման ապահովում	Ոռոգման համակարգերի կառուցում կամ վերականգնում՝ ոռոգման համար մատչելի ջրի ավելացման համար (ավելի արդյունավետ ոռոգմանն ուղղված միջոցառումներ, այսինքն՝

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
			պահանջարկի կողմի փոփոխություն-ներ. առավել մանրամասն ներկայաց-ված է գյուղատնտեսության բաժնում):
		Դրենաժ	Դրենաժային ցանցերի կառուցում կամ արդիականացում, օրինակ՝ անձրևաջրերի թունելներ, անձրևաջրերի հավաքման համար ջրահեռացման միասնական համակարգ, կանաչ միջանցքներ
		Ջրային ռեսուրսների կառավարում	Արտահոսքի նվազեցման գործողություններ, ջրաչափերի և ջրի խնայողության այլ տեխնոլոգիաների ներդրում. ջրի վերամշակում, ջրի արդյունավետ օգտագործումը խրախուսող գործողություններ
Գյուղատնտ-ես-ություն	Գյուղական համայնքների և գյուղացիական տնտեսությունների վրա ազդեցության և խոցելիության նվազեցում կլիմայական անբարենպաստ պայմանների նկատմամբ և դրանց հարմարվողակա-նության և հաղթահարման կարողությունների ընդլայնում:	Բուսաբուծություն և մշակաբույսերի պաշտպանություն	Մշակաբույսերի տեսակների փոփոխություն/ զարգացում՝ ի պատասխան կլիմայական անբարեն-պաստ պայմանների. վերահսկվող գյուղատնտեսության զարգացում, օրինակ՝ նոր ջերմոցներ՝ ի պատաս-խան կլիմայական անբարենպաստ պայմանների կամ մշակաբույսերի պաշտպանություն կլիմայական վտանգներից. հողերի դրենաժի բարելավում, հողի բերրիության, պահպանման և հողի ջրի պահպանման միջոցառումներ, օրինակ՝ միջանկյալ մշակաբույսերի մշակում, ագրոտնտեսություն
		Ջրի օգտագործման արդյունավետության բարձրացում	Անցում ոռոգման ավելի արդյունավետ տեխնոլոգիաների (օրինակ՝ կաթիլային ոռոգում), անձրևաջրերի հավաքում
		Անասուններ	Գյուղացիական տնտեսություններին աջակության միջոցառումներ անասնաբուծության ռազմավարության փոփոխության կամ անասնաբուծական ծրագրերին մասնակցելու ուղղությամբ. անասունների գենետիկ ռեսուրսների շտեմարանների մշակում, պատվաս-տումների ծրագրեր կլիմայի հետ կապված հիվանդությունների դեմ, անասունների կերակրման և արածեց-ման գործելաոճերի փոփոխում, անաս-նաբուծական հողատարածքների՝ հողի և ջրի կառավարման բարելավմանն ուղղված գործողություններ. կենդանի-ների կառավարման համակարգերի ներդրում կամ կարգաբերում, օրինակ՝ համապատասխան ստվերածածկի և

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
			ջրի ապահովում կամ գոմային պայմանների բարելավում՝ ջերմային սթրեսի ազդեցությունը նվազեցնելու համար
		Ձկնաբուծություն	Ձկնաբուծական տնտեսությունների աղտոտման հողային աղբյուրների նվազեցում, վնասակար ձկնորսական գործելակերպերի կրճատմանն ուղղված միջոցառումներ, տեղական ձկնորսական տնտեսությունների պաշտպանության միջոցառումներ
		Գյուղատնտեսական արտադրանքի վրա հիմնվող գյուղական համայնքների կենսապահովման աջակցություն	Գյուղական բնակիչների համար բերքատվության, սննդի անվտանգության և կենսապահովման և սոցիալական պաշտպանության բարձրացմանն ուղղված գործողություններ (ներառյալ կորցրած բերքի դիմաց սուբսիդիաները, ապահովագրությունը, գյուղական ենթակառուցվածքների վերականգնումը, գյուղական գործունեության տեսակների դիվերսիֆիկացումը), հողագործական տարածքների տեղաշարժում, գյուղական բնակավայրերի տեղափոխում
Բնակավայրեր, ենթակառուցվածքներ և էներգիա	Կլիմայական փոփոխվող պայմանների նկատմամբ քաղաքացիների և ակտիվների վրա ազդեցության և խոցելիության նվազեցում և ծառայությունների շարունակականության ապահովում	Ջրհեղեղներից պաշտպանության ենթակառուցվածք	Հեղեղապաշտպան պատվարների, օրինակ՝ պատնեշների, ամբարտակների, ափամերձ պաշտպանության կառուցվածքների կառուցում և շահագործում
		Տրանսպորտ - վտանգների նվազեցում	Երկաթուղիների, ճանապարհների և այլ տրանսպորտային ենթակառուցվածքների արդյունավետության բարելավում՝ կլիմայական ռիսկերը հաղթահարելու համար՝ ջրհեղեղներից պաշտպանություն, ափերի կայունացում, կամուրջների պաշտպանություն, ռիսկերի քարտեզագրում և ակտիվների մոնիտորինգ, արտակարգ գործողությունների պլանների մշակում
		Տրանսպորտ - հաղորդակցության բարելավում	Հաղորդակցության և շուկաների հասանելիության բարելավում, հատկապես խոցելի խմբերի համար
		Էներգիա	Հիդրոէներգետիկ օբյեկտների ուժեղացում, ջրի անբավարար կամ ոչ կայուն հոսքի հոսքի պայմաններում աշխարհատանքին հարմարեցման նպատակով հիդրոէներգետիկ օբյեկտների արդիականացում, ամբարտակի պահեստային հզորությունների մեծացում

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
			Էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման հուսալիության բարձրացում
			Բաշխվող էներգիայի արտադրության ավելացում
		Շենքեր	Կլիմայական վտանգների նկատմամբ շենքերի դիմակայունության բարձրա-ցում, օրինակ՝ հիմքերի ամրացում հեղեղման ռիսկի կրճատման նպատա-կով, օդորակման կամ բնական հովաց-ման միջոցների տեղադրում, շենքերում եղանակային երևույթների հետ կապված կորուստներից ապահովագր-ման մեխանիզմների մշակում
		Թափոններ	Կոշտ թափոն ների կառավարման օբյեկտների հակահեղեղային պաշտպանություն, դեպի կոյուղի աղբավայրերից ջրերի ներթափանց-ման նվազեցմանն ուղղված միջոցա-ռումներ, կանաչ ենթակառուցվածքներ՝ արտահոսքը կրճատելու համար, կոյուղաջրերի մաքրման կայանների շուրջ հեղեղապաշտպան միջոցների տեղադրում, կոյուղաջրերի հավաքման համակարգերի ամրացում
Մարդու առողջություն	Կանխատեսվող կլիմայի փոփոխության պայմաններում բնակչության առողջության ապահովում	Կլիմայի հետ կապված առողջապահական ծախսեր	Կոնկրետ միջոցառումներ՝ կապված ԿՓ հետևանքով հնարավոր վատթարացման ենթակա հիվանդությունների հետ (ջրի միջոցով փոխանցվող հիվանդություններ, համաճարակաբանական իրավիճակի վերահսկում և ջերմային ալիքներ)
		Առողջապահական ընդհանուր ծախսեր	Առողջապահական ընդհանուր ծախսեր, օրինակ ՝ հանրային առողջապահական արշավներ, պատվաստումների ծրագրեր
Զբոսաշրջու-թյուն	Աջակցություն զբոսաշրջությանը, որը նպաստում է լանդշաֆտների պահպանմանը և վերականգնմանը, որոնք օժանդակում են ԿՓ նկատմամբ դիմակայունությանը	Էկոտուրիզմ	Էկոտուրիզմի խթանում
Խաչվող հարցեր	Կրթություն, հետազոտությունների պլանավորում և քաղաքականության ապահովում՝ ուղղված ԿՓ	Աղետների ռիսկի կառավարում	Եղանակի մոնիտորինգի, կանխատես-ման և վաղ նախազգուշացման համակարգի կատարելագործում (ներառյալ՝ հարակից ՏՀՏ համակար-գը), արտակարգ իրավիճակների պլանների մշակում, աղետների ռիսկի

Քաղաքակա-նության ոլորտ	Նպատակ	Քաղաքականության ուղղություն	Գործողությունների օրինակներ
	դիմակայունության բարձրացմանը		կառավարման մարմինների այլ գործողություններ
		Կրթություն և իրազեկում	Կլիմայի հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկության բարձրացում
		Քաղաքականություն և կարգավորում	ԿՓ հարմարվողականությանը և դիմակայունությանն առնչվող ազգային կամ ոլորտային հատուկ քաղաքականություններ, ծրագրեր, կանոնակարգեր (և դրանց հետ կապված ֆինանսական գործիքներ)
		Հետազոտություն	Կլիմայական մոդելների մշակում, ԿՓ ազդեցության վերլուծություններ, հարմարվողականության լուծումների վերաբերյալ հետազոտություններ

Սույն տիպաբանությամբ ներկայացված գործողությունների ցանկը ԿՓ առնչվող գործողությունների սպառիչ ցանկ չէ: Այս ցանկում չներառված գործողությունները ևս կարող են նույնականացվել որպես ԿՓ առնչվող, եթե դրանք համապատասխանում են ԿՓ մեղմման և հարմարվողականության վերոհիշյալ սահմանումներին կամ համահունչ են կլիմայական քաղաքականության նպատակներին և գործողություններին:

6. ՄԱՍ 2. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿՈԴԱՎՈՐՈՒՄ

Ըստ ԿՓ արձագանքման ուղղությունների բյուջետային միջոցառումները դասակարգվում են հետևյալ երկու խմբերում՝

- **Մեղմման միջոցառումներ** (միջոցառումներ, որոնք նպաստում են մթնոլորտում ՋԳ արտանետումների կրճատմանը կամ ՋԳ կլանման ընդլայնմանը)
- **Հարմարվողականության միջոցառումներ** (միջոցառումներ/գործողություններ, որոնք ուղղված են նվազեցնելու ԿՓ հետևանքների և կլիմային առնչվող ռիսկերի նկատմամբ մարդու կամ բնական համակարգերի խոցելիությունը՝ պահպանելով կամ բարձրացնելով ԿՓ հետևանքներին հարմարվելու և դիմակայելու կարողությունները):

Այս դասակարգումը կիրառվում է բյուջետային գործընթացում կիրառվող փաստաթղթերում և տեղեկատվական համակարգերում ԿՓ առնչվող բյուջետային ծրագրերի և դրանց բաղադրիչների նույնականացման համար:

Կլիմայական դասակարգումը բյուջետային ծախսերի ներկայացման (դասակարգման) առանձին և ինքնուրույն տեսակ է: Այն անկախ է բյուջետային ծախսերի այլ դասակարգումներից, այսինքն բյուջետային ծախսերի այլ դասակարգումները չպետք է կանխորոշեն այդ ծախսերի կլիմայական դասակարգումը: Կլիմայական դասակարգչի կիրառման օբյեկտ է հանդիսանում բյուջետային հատկացումների մակարդակը, այսինքն բյուջետային ծրագրի միջոցառումը: **Այսինքն, կլիմայական դասակարգիչը պետք է կիրառվի և կլիմայական ծախսերը պետք է նույնականացվեն բյուջետային ծրագրերի միջոցառումների մակարդակում:**

Տվյալ տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջետային ծրագրի միջոցառման ամբողջ գումարը **պետք է դասակարգվի միևնույն կլիմայական դասիչի ներքո**: Որևէ միջոցառման գծով ծախսերը չպետք է ներկայացվեն/բաշխվեն տարբեր կլիմայական դասիչների ներքո: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ միջոցառումը միանշանակ դասակարգել կլիմայական դասակարգման մեկ դասիչի ներքո, այսինքն միջոցառումը միաժամանակ առնչվում է մեկից ավելի կլիմայական դասիչների հետ, ապա անհրաժեշտ է այն դասել կլիմայական այն դասիչի ներքո, որին համեմատաբար մեծ առնչություն ունի տվյալ միջոցառումը:

Ծրագրի և միջոցառումների համար սահմանվող կլիմայական դասիչները բացառապես թվային կոդեր են՝ առանց տառերի կամ այլ նշանների կիրառության:

Կլիմայական դասիչը հինգ նիշից բաղկացած թվային կոդավորման համակարգ է: Այն ունի հետևյալ տեսքը՝ XXXXX, որտեղ X-ը 0-ից 9 միջակայքում գտնվող բնական թիվ է: Կլիմայական դասիչը կազմված է երկու բաղադրիչներից՝ դասիչի առաջին երեք նիշերն արտահայտում են կլիմայական քաղաքականության բաղադրիչը, իսկ վերջին երկու նիշերը՝ ԿՓ առնչության մակարդակը:

6.1. Կլիմայական դասիչի՝ քաղաքականության բաղադրիչի որոշում

Կլիմայական դասիչի քաղաքականության բաղադրիչն արտահայտում է տվյալ միջոցառման շրջանակներում իրականացվող ծախսերի՝ ԿՓ արձագանքման ուղղությունը, կլիմայական ռազմավարական ոլորտը և կլիմայական քաղաքականության ուղղությունը:

Վերը բերված տիպաբանության աղյուսակի միջոցով նշված դասիչները ընտրվում են ըստ հետևյալ հայտանիշների՝

ա) Կլիմայական փոփոխությանն արձագանքման ուղղություն կամ ազդեցություն (մեղմում կամ հարմարվողականության բարելավում),

բ) Ոլորտ (օրինակ՝ էներգետիկա, տրանսպորտ, կառուցված միջավայր և այլն),

գ) Ենթաոլորտ կամ միջոցառման քաղաքականության ուղղվածություն (օրինակ՝ վերականգնվող էներգետիկա, էներգիայի փոխանցում և բաշխում և այլն):

Ըստ էության, յուրաքանչյուր միջոցառման դասակարգիչը կազմվում է հետյալ կերպ.

1) **Առաջին նիշը** ցույց է տալիս, թե տվյալ միջոցառումը ԿՓ արձագանքման որ ուղղությանն է պատկանում (**1 նիշը** համապատասխանում է մեղմման ուղղությանը, իսկ **2-ը**՝ հարմարվողականության բարձրացմանը):

Օրինակ

1072 ծրագրի 31010 միջոցառումը (Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում) ենթադրում է Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգման նախագծերի և աշխատանքների ձեռքբերում, ինչը նշված է այս միջոցառման նկարագրության մեջ: Այս միջոցառումը պատկանում է կլիմայի փոփոխության հարմարվողականության խմբին, քանի որ՝

ա) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավումները չեն հանգեցնում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման կամ դրանց կլանման ընդլայնմանը (այսինքն, այս աշխատանքները չեն հանգեցնի ԿՓ մեղմման), և

բ) թույլ կտան կլիմայի փաստացի կամ կանխատեսվող փոփոխության պայմաններում կրճատել վնասները (ջրամատակարարման համակարգում ջրի կորուստների կրճատման արդյունքում) և մեղմել ԿՓ անբարենպաստ հետևանքները:

*Հետևաբար, այս միջոցառման կլիմայական կոդի առաջին նիշը **2** է*[2]*:*

[2] ԿՓ արձագանքման ուղղությունը հնարավոր է պարզել Աղյուսակ 1-ում (Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների տիպաբանություն) ներկայացված գործողությունների նկարագրությունների միջոցով:

2) **Երկրորդ նիշը** համապատասխանում է այն ոլորտին, որտեղ իրականացվելու է միջոցառումը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Միջոցառման ոլորտի կամ արձագանքման ուղղության որոշումը

Արձագանքման ուղղություն/ոլորտ		Դասակարգչի նիշը[3]
Մեղմում		1
	Էներգետիկա	(1)1
	Տրանսպորտ	(1)2
	Կառուցված միջավայր	(1)3
	Գյուղատնտեսություն	(1)4
	Արդյունաբերություն և արդյունաբերական գործընթացներ	(1)5
	Թափոններ	(1)6
	Հողօգտագործում և անտառտնտեսություն	(1)7
	Խաչվող հարցեր	(1)8
Հարմարվողականության բարելավում		2
	Բնական էկոհամակարգեր և կենսաբազմազանություն	(2)1
	Ջրային ռեսուրսներ	(2)2
	Գյուղատնտեսություն	(2)3
	Բնակավայրեր, ենթակառուցվածքներ և էներգետիկա	(2)4
	Մարդու առողջություն	(2)5
	Զբոսաշրջություն	(2)6
	Խաչվող հարցեր	(2)7

Օրինակ

1072 ծրագրի 31010 միջոցառումը (Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում) միջոցառումը, համաձայն Աղյուսակ 2-ում ներկայացված ոլորտների դասակարգման, պատկանում է Ջրային ռեսուրսների ոլորտին, քանի որ այն ենթադրում է առկա ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում՝ համակարգերի բարելավման միջոցով: Վերը բերված Աղյուսակ 2-ում ԿՓ հարմարվողականության բարելավում բաժնում նշված է Ջրային ռեսուրսներ ոլորտը, որի դեպքում կլիմայական դասիչի երկրորդ նիշը 2-ն է (նախորդ քայլում այս միջոցառման կլիմայական դասիչի առաջին նիշը 2-ն էր՝ որպես հարմարվողականության բարելավում ապահովող միջոցառում):

*Այս փուլում ամբողջական դասիչը կունենա **22XXX** տեսքը: Դասիչի վերջին երեք նիշերը կսահմանվեն 3-5-րդ քայլերի արդյունքում:*

[3] Ամբողջական դասիչը կազմելիս փակագծերը չեն կիրառվում. այստեղ տրված են դասակարգման սկզբունքն ակնառու ներկայացնելու նպատակով:

3) **Երրորդ** նիշը համապատասխանում է ենթաոլորտին, ինչը որոշ դեպքերում կարող է համապատասխանել բյուջեի գործառական դասակարգման խմբին/դասին, իսկ որոշ դեպքերում ծրագրային դասակարգման մեջ ծրագրի և միջոցառման անվանումից կբխի, թե կլիմայական քաղաքականության առումով որ ուղղությանը կամ ենթաոլորտին է պատկանում տվյալ միջոցառումը: Աղյուսակ 3-ում ներկայացված է կլիմայական քաղաքականության բաղադրիչի համար կիրառվող դասիչների ամբողջությունը.

Աղյուսակ 3. Կլիմայական դասիչի քաղաքականության բաղադրիչի ներկայացում

Ազդեցություն	Կլիմայական քաղաքականություն		Կլիմայական դասիչ (քաղաքականության բաղադրիչ)
	Ոլորտ	Ուղղություն	
Մեղմում			100
	Էներգետիկա		110
		Վերականգնվող էներգիա	111
		Արտանետումային ցածր հզորություն	112
		Վերականգնվող էներգիայով ջեռուցում և կերակրի պատրաստում	113
		Ջեռուցման և կերակրի պատրաստման հետևանքով արտանետումների կրճատում	114
		Էներգիայի փոխանցում և բաշխում	115
		Աճխածնի կլանում, օգտագործում և պահպանում	116
	Տրանսպորտ		120
		Քաղաքային տրանսպորտ	121
		Միջքաղաքային տրանսպորտ	122
		Ավիացիա	123
		Վառելիք և ճանապարհային տրանսպորտային միջոցներ	124
		Տրանսպորտային համակարգի կառավարում	125
	Կառուցված միջավայր		130
		Շենքեր	131
		Հանրային ծառայություններ	132
		Այլ	133
	Գյուղատնտեսություն		140
		Հողերի օգտագործում և կառավարում	141
		Անասուններ	142
		Էներգաարդյունավետություն	143
	Արդյունաբերություն և արդյունաբերական գործընթացներ		150
		Էներգաարդյունավետություն	151
		Աճխածնի կլանում, օգտագործում և պահպանում	152
		Արդյունաբերական գործընթացներ	153
		Օդորակում և հովացում	154
	Թափոններ		160
		Կոշտ թափոնների կառավարում և վերամշակում	161
		Կեղտաջրերի մաքրում	162
		Գյուղատնտեսական թափոններ	163
	Հողօգտագործում և անտառտնտեսություն		170
		Անտառային տնտեսություն	171

		Այլ	172
	Խաչվող հարցեր		180
		Կրթություն և իրազեկում	181
		Քաղաքականություն և կարգավորում	182
		Ֆինանսներ	183
		Հետազոտություն	184
Հարմարվողականություն			200
	Բնական էկոհամակարգեր և կենսաբազմազանություն		210
		Անտառներ	211
		Բնական կենսավայրերի պաշտպանություն	212
		Պաշտպանություն անապատացումից	213
	Ջրային ռեսուրսներ		220
		Ջրամատակարարման և ջրահեռացման ապահովում	221
		Ջրի որակ	222
		Ոռոգման ապահովում	223
		Դրենաժ	224
		Ջրային ռեսուրսների կառավարում	225
	Գյուղատնտեսություն		230
		Բուսաբուծություն և մշակաբույսերի պաշտպանություն	231
		Ջրի օգտագործման արդյունավետության բարձրացում	232
		Անասուններ	233
		Ձկնաբուծություն	234
		Գյուղատնտեսական արտադրանքի վրա հիմնվող գյուղական համայնքների կենսապահովման աջակցություն	235
	Բնակավայրեր, ենթակառուցվածքներ և էներգիա		240
		Ջրհեղեղներից պաշտպանության ենթակառուցվածքներ	241
		Տրանսպորտ - վտանգների նվազեցում	242
		Տրանսպորտ - հաղորդակցության բարելավում	243
		Էներգիա	244
		Շենքեր	245
		Թափոններ	246
	Մարդու առողջություն		250
		Կլիմայի հետ կապված առողջապահական միջոցառումներ	251
		Առողջապահական ընդհանուր ծախսեր	252
	Զբոսաշրջություն		260
		Էկոտուրիզմ	261
	Խաչվող հարցեր		270
		Աղետների ռիսկի կառավարում	271
		Կրթություն և իրազեկում	272
		Քաղաքականություն և կարգավորում	273
		Հետազոտություն	274

Օրինակ

1072 ծրագրի 31010 միջոցառումը (Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում) պատկանում է Ջրային ռեսուրսների ոլորտին (համաձայն Քայլ 2-ի արդյունքների), և մասնավորապես, Աղյուսակ 3-ում նշված Ջրամատակարարման և

*ջրահեռացման ապահովում ուղղությանը կամ ենթաոլորտին, որի դեպքում դասիչի երրորդ նիշը **1** է:*

*Այս փուլում ամբողջական դասիչը կունենա **221XX** տեսքը: Վերջին երկու նիշերի որոշման համար անհրաժեշտ է հետևել Կլիմայական դասիչի՝ կլիմայի փոփոխությանն առնչության բաղադրիչի որոշման փուլի ցուցումներին:*

6.2. Կլիմայական դասիչի՝ կլիմայի փոփոխությանն առնչության բաղադրիչի որոշում

Աղյուսակ 4-ում ներկայացված են կլիմայական դասիչի՝ ԿՓ առնչության բաղադրիչի դասիչները, որոնք աջից ավելացվում են քաղաքականության բաղադրիչի **3** նիշից բաղկացած դասիչին:

Աղյուսակ 4. Կլիմայական փոփոխության առնչության բաղադրիչի դասիչ

Կլիմայի փոփոխությանն առնչության խումբը	Կշիռը	Կլիմայական դասիչ (առնչության բաղադրիչը)
Ուղղակի առնչություն		10
	Բարձր (100%)	11
	Միջին (90%)	12
	Ցածր (80%)	13
Բարձր առնչություն		20
	Բարձր (75%)	21
	Միջին (65%)	22
	Ցածր (55%)	23
Միջին առնչություն		30
	Բարձր (50%)	31
	Միջին (40%)	32
	Ցածր (30%)	33
Ցածր առնչություն		40
	Բարձր (25%)	41
	Միջին (15%)	42
	Ցածր (5%)	43

ԿՓ առնչության բաղադրիչը ցույց է տալիս, թե որքանով է տվյալ միջոցառումը էական ԿՓ արձագանքման տեսանկյունից՝ թե՛ ֆինանսական գնահատականի առումով, և թե՛ հայտարարված քաղաքականության մեջ դրա արտացոլման և կարևորության առումով: Միջոցառումների առնչության որոշման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Աղյուսակ 5-ով:

Աղյուսակ 5. Միջոցառման առնչությունը կլիմայի փոփոխությանը

Առնչությունը	Մեղմում	Հարմարվողականություն
Ուղղակի առնչություն	Միջոցառման հայտարարված նպատակներից մեկը ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների կրճատումն է կամ ՋԳ կլանման ընդլայնումը և դրանով իսկ	Միջոցառման հայտարարված նպատակ-ներից մեկը ԿՓ ներկայիս և սպասվող ազդեցությունների, ներառյալ ԿՓ նկատմամբ մարդու կամ բնական

	մթնոլորտում ՋԳ կոնցենտրացիայի կայունացմանը նպաստելը: ***Օրինակ՝*** *վերականգնվող էներգիայի զարգացում՝ նպատակ ունենալով կրճատել արտանետումները*	համակարգերի խոցելիության, նվազեցումն է՝ կլիմայական ազդակներին, շոկերին և փոփոխականությանը հարմարվելու կամ դրանք կլանելու աճող կարողության կամ դրանց ազդեցության նվազեցմանն աջակցելու միջոցով դիմակայության պահպանման կամ բարձրացման շնորհիվ: ***Օրինակ՝*** *կլիմայական երկարաժամկետ կանխատեսումների մշակում*
Բարձր առնչություն	Չկա հստակ հայտարարված նպատակ, որ միջոցառումը կոչված է նպաստելու մթնոլորտում ջերմոցային գազերի կոնցենտրացիայի կայունացմանը, սակայն գոյություն ունի ապացուցելի (միջազգային) փաստարկում, որ տվյալ միջոցառումը միևնույն է կնպաստի այդ կայունացմանը: Ավելին, միջոցառումը համահունչ է Փարիզյան համաձայնագրի՝ ջերմաստիճանի վերահսկման ընդհանուր նպատակների հետ: ***Օրինակներ՝*** *միջոցառումներ ուղղված էներգաարդյունավետության բարձրացմանը, էլեկտրական հասարակական տրանսպորտի կիրառության մեծացմանը, կամ անտառային պաշարների պաշտպանությունը, որոնք չունեն արտանետումների կրճատման հստակ նպատակադրում*	Չկա հստակ հայտարարված նպատակ ԿՓ ազդեցությունների նկատմամբ խոցելիության նվազեցման վերաբերյալ, սակայն տրամաբանորեն ակնկալվում է, որ միջոցառումը կապահովի դա՝ կլիմայական վտանգների ազդեցության կամ վտանգների ինտենսիվության նվազեցման, կամ կոնկրետ կլիմայական վտանգների նկատմամբ խոցելիության նվազեցման միջոցով: ***Օրինակներ՝*** *ջրի օգտագործման արդյունավետության բարելավման միջոցառումներ, որոնք հատուկ ուղղված են երաշտների նկատմամբ խոցելիության նվազեցմանը, ճանապարհների վերականգնման ծախսեր, որոնք նվազեցնում են ջրհեղեղների նկատմամբ ճանապարհների խոցելիությունը:*
Միջին առնչություն	Չկա հստակ հայտարարված նպատակ, որ միջոցառումը կնպաստի մթնոլորտում ջերմոցային գազերի կոնցենտրացիայի կայունացմանը, սակայն գոյություն ունի ապացուցելի (միջազգային) փաստարկում, որ տվյալ միջոցառումը կնպաստի այդ կայունացմանը: Այնուամենայնիվ, կա մտավախություն, որ այդ միջոցառումը չի համապատասխանում Փարիզի համաձայնագրի ընդհանուր ջերմաստիճանի նպատակին, այն պատճառով, որ գոյություն ունի արտանետումների կրճատման այլընտրանքային տարբերակ, որը թույլ կտա արտանետումների ավելի մեծ կրճատումներ իրականացնել:	Չկա հստակ հայտարարված նպատակ խոցելիության նվազեցման վերաբերյալ, սակայն միջոցառումը իրականացնում է դա՝ ավելացնելով հաղթահարման կամ հարմարվողականության կարողությունն այնպես, որ անհամաչափորեն ուղղված լինի այն մարդկանց, ովքեր խոցելի են ԿՓ նկատմամբ կամ գտնվում են կլիմայի հանդեպ զգայուն ոլորտներում: ***Օրինակներ՝*** *գյուղական տնային տնտեսությունների հաղորդակցության բարելավում կամ նույն խմբի մարդկանց սոցիալական պաշտպանության միջոցառումների ավելացում:*

	Օրինակներ՝ *գազի միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի արտադրության արդյունավետության բարելավում:*	
Ցածր առնչություն		Չկա հստակ հայտարարված նպատակ խոցելիության նվազեցման վերաբերյալ, սակայն միջոցառումը իրականացնում է դա՝ ավելացնելով հաղթահարման կամ հարմարվողականության կարողությունը (դրանք չեն թիրախավորում մարդկանց, որոնք խոցելի են ԿՓ նկատմամբ) ***Օրինակներ՝*** *հանրային առողջության օժանդակության կամ հաղորդակցության բարելավման միջոցառումների ծախսեր*

Օրինակ

1072 ծրագրի 31010 միջոցառումը (Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում) դասակարգվում է ԿՓ նկատմամբ հարմարվողականության բարձրացմանն ուղղված միջոցառում: Այնուամենայնիվ, այն չունի հստակ հայտարարված նպատակ խոցելիության նվազեցման վերաբերյալ, մասնավորապես.

ա) այն ներառված չէ Հարցաշար 1-ի Ծանոթագրություն 1-ում նշված փաստաթղթերում,

բ) համաձայն 2024թ. պետական բյուջեի մասին օրենքի՝ 1072 բյուջետային ծրագրի նպատակը չի առնչվում կլիմայի փոփոխությանը:

Հետևաբար, այս միջոցառումը չի կարող դասվել կլիմայի փոփոխությանը ուղղակի առնչություն ունեցող միջոցառումների խմբին:

Այդուհանդերձ, այս միջոցառումը նպաստում է ԿՓ հանդեպ խոցելիության կրճատմանը՝ ավելացնելով հաղթահարման կամ հարմարվողականության կարողությունը (տվյալ դեպքում համակարգերի հիմնանորոգման և բարելավման արդյունքում ջրի կորուստների կրճատման հետևանքով):

*Հետևաբար, այս միջոցառումը **բարձր** առնչության խմբի միջոցառում է, ինչը նշանակում է, որ այս միջոցառման կշիռը կսահմանվի 50-75% միջակայքում:*

*Քանի որ բարձր առնչություն ունեցող միջոցառումների խմբի դասիչի 4-րդ նիշը **2**-ն է (տե՛ս Աղյուսակ 4), համապատասխանաբար այս միջոցառման դասիչը կունենա 2212X տեսքը այս քայլի արդյունքում:*

Կշիռների որոշման գործընթացի ալգորիթմը ներկայացված է Հավելված 1-ում: Հարցաշար 2-ում ներկայացված հարցերին պատասխանելու միջոցով կորոշվի տվյալ միջոցառման առնչության խումբը (ուղղակի, բարձր, միջին և ցածր առնչություն ունեցող միջոցառումների խմբեր) և համապատասխան կշիռը (5-100%)՝ համաձայն Հավելված 1-ում ներկայացված քայլերի տրամաբանության և հերթականության:

Հիմնական պարամետրերը, որոնցից կախված կլինի տվյալ խմբին դասվելը և, հետևաբար, նաև միջոցառմանը տրվող կշիռը, հետևյալներն են.

1) ԿՓ արձագանքմանն ուղղված քաղաքականության մաս հանդիսանալը,

2) Տվյալ միջոցառման հայտարարված նպատակը՝ կլիմայական (խաչվող), թե միջոցառման ծրագրին կամ ոլորտին համապատասխանող,

3) Մեղմմանը կամ հարմարվողականության բարելավմանն ուղղված լինելը (ընդհանուր առմամբ, մեղմմանն ուղղված միջոցառումներին ավելի բարձր կշիռներ են տրվում),

4) Ակնկալվող կլիմայական օգուտների մակարդակը՝ էական, չափավոր կամ փոքր,

5) Մեղմման և հարմարվողականության օգուտների միմյանց չեզոքացնելու կամ համատեղ հանդես գալու փաստը կամ ակնկալիքները:

Հարցաշար 2. Կլիմայի փոփոխության առնչության մակարդակի որոշման և կշիռների որոշման հարցաշար

1. Արդյո՞ք միջոցառումն անմիջականորեն ներառված է կլիմայի փոփոխության ոլորտում քաղաքականությունը սահմանող փաստաթղթերում (ռազմավարություն, միջոցառումների ծրագիր և այլն):

Պատասխան	Առնչության խումբ	Խմբի ներսում կշիռը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո	Ուղղակի առնչության խումբ	Բարձր (100%)	11
2. Ոչ	Անցնել Հարց 2-ին		

2. Արդյո՞ք միջոցառումն իրականացվում է առաջին հերթին իր կլիմայական նպատակներով (ՋԳ արտանետումների կրճատում կամ կլիմայի փոփոխության հարմարվողականություն):

Պատասխան	Առնչության խումբ	Խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո	Ուղղակի առնչության խումբ	Անցնել Հարց 2.1-ին	1X
2. Ոչ	Անցնել Հարց 3-ին		

2.1 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության համատեղ օգուտներ:

Պատասխան	Ուղղակի առնչության խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (համատեղ օգուտների ապահովում)	Բարձր (100%)	11
2. Ոչ	Անցնել Հարց 2.2-ին	

2.2 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության չեզոքացվող օգուտներ:

Պատասխան	Ուղղակի առնչության խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (չեզոքացվող օգուտների ապահովում)	Ցածր (80%)	13
2. Ոչ	Միջին (90%)	12

3. Արդյո՞ք միջոցառումը պարունակում է էական կլիմայական օգուտներ ապահովող գործողություններ՝ համաձայն կլիմայական միջոցառումների նույնականացման տիպաբանության:

Պատասխան	Առնչության խումբ	Խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը

1. Այո	Բարձր առնչության խումբ	Անցնել Հարց 3.1-ին	2X
2. Ոչ	Անցնել Հարց 4-ին		

3.1 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության համատեղ օգուտներ:

Պատասխան	Բարձր առնչության խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (համատեղ օգուտների ապահովում)	Բարձր (75%)	21
2. Ոչ	Անցնել Հարց 3.2-ին	

3.2 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության չեզոքացվող օգուտներ:

Պատասխան	Բարձր առնչության խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (չեզոքացվող օգուտների ապահովում)	Ցածր (55%)	23
2. Ոչ	Միջին (65%)	22

4. Արդյո՞ք միջոցառումը պարունակում է չափավոր կլիմայական օգուտներ ապահովող գործողություններ՝ համաձայն կլիմայական միջոցառումների նույնականացման տիպաբանության:

Պատասխան	Առնչության խումբ	Խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո	Միջին առնչության խումբ	Անցնել Հարց 4.1-ին	3X
2. Ոչ	Անցնել Հարց 5-ին		

4.1 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության համատեղ օգուտներ:

Պատասխան	Միջին առնչության խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (համատեղ օգուտների ապահովում)	Բարձր (50%)	31
2. Ոչ	Անցնել Հարց 4.2-ին	

4.2 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության չեզոքացվող օգուտներ:

Պատասխան	Միջին առնչության խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (չեզոքացվող օգուտների ապահովում)	Ցածր (30%)	33
2. Ոչ	Միջին (40%)	32

5. Արդյո՞ք միջոցառումը պարունակում է փոքր կլիմայական օգուտներ ապահովող գործողություն-ներ՝ համաձայն կլիմայական միջոցառումների նույնականացման տիպաբանության:

Պատասխան	Առնչության խումբ	Խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո	Ցածր առնչության խումբ	Անցնել Հարց 5.1-ին	4X

5.1 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության համատեղ օգուտներ:

Պատասխան	Ցածր առնչության խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (համատեղ օգուտների ապահովում)	Բարձր (25%)	41
2. Ոչ	Անցնել Հարց 5.2-ին	

5.2 Արդյո՞ք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության չեզոքացվող օգուտներ:

Պատասխան	Խմբի ներսում կշռի որոշման հաջորդ հարցը	Դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը
1. Այո (չեզոքացվող օգուտների ապահովում)	Ցածր (5%)	43
2. Ոչ	Միջին (15%)	42

Օրինակ

1072 ծրագրի 31010 միջոցառումը (Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում) ԿՓ ծախսերի տիպաբանության աղյուսակի (Աղյուսակ 1) համաձայն պատկանում է բարձր առնչության խմբին: Այսինքն, այս միջոցառումը կարող է ունենալ 55%, 65% կամ 75% կշիռ: Կոնկրետ կշռի մեծությունը որոշելու համար անհրաժեշտ է պատասխանել 3.1. հարցին, այն է՝ արդյոք միջոցառումն ապահովում է մեղմման և հարմարվողականության համատեղ օգուտներ:

Ջրամատակարարման և ջրահեռացման ապահովումը, հանդիսանալով ԿՓ հարմարվողականության բարձրացման նպաստող միջոցառում, ունի նաև ԿՓ մեղմման լրացուցիչ օգուտներ՝ ջրի կորուստների կրճատման արդյունքում ջրի արտադրության և բաշխման համար պահանջվող էլեկտրաէներգիայի կրճատման շնորհիվ: Այսինքն, 3.1. հարցի պատասխանը դրական է, ինչը նշանակում է, որ այս միջոցառման դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը 21 են (համապատասխանաբար, 2-ը բարձր առնչության խմբի նիշն է, իսկ 1-ը՝ հարմարվողականության և մեղղման համատեղ օգուտներ ապահովելու պատճառով խմբի ներսում առավել բարձր կշռին համապատասխանող նիշն է):

Արդյունքում, 1072 ծրագրի 31010 միջոցառմանը (Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում) կվերագրվի 22121 դասիչը, որի համապատասխան կլիմայական կշիռը 75% է:

7. ՄԱՍ 3. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նկարագրված հաջորդականությամբ քայլերի իրականացման միջոցով ստացված կոդը կներկայացնի այն կշիռը, որը համապատասխանում է տվյալ միջոցառման կլիմայական առնչության կշռին: Նման եղանակով կնշագրվեն բյուջետային բոլոր միջոցառումները՝ ստանալով 0-100% միջակայքում կշիռներ: Ստացված կշիռների՝ համապատասխան միջոցառումների գումարի վրա կիրառելով հաշվարկվում են ծախսերի մեծությունները, որոնք կարելի է վերագրել ԿՓ արձագանքող քաղաքականություններին: Դրանց ընդհանուր գումարը հարաբերելով ընդհանուր ծախսերի գումարին՝ կստացվի ԿՓ առնչվող բյուջետային ծախսերի գործակիցը կամ դրանց կշիռն ընդհանուր ծախսերի կազմում: Կլիմայական ծախսերի մեծության որոշման բանաձևը հետևյալն է.

Կլիմայական ծախսերի մեծություն = ∑Միջոցառման գումար X ԿԲՆ դասիչին համապատասխանող կշիռ/100%

Համապատասխանաբար, կլիմայական ծախսերի գործակցի կամ ընդհանուր ծախսերում դրանց կշռի հաշվարկման բանաձևը կունենա հետևյալ տեսքը.

Կլիմայական գործակից = Կլիմայական ծախսեր/Ընդհանուր (բյուջետային) ծախսեր*100%

Օրինակ

1072 ծրագրի 31010 միջոցառման համար (Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի հիմնանորոգում) 2025թ. պետական բյուջեով նախատեսված է 4 530 մլն դրամ: 75% կշռի կիրառման դեպքում տվյալ միջոցառման կլիմայի փոփոխության առնչությանը համապատասխանող կլիմայական ծախսը կկազմի 3 397,5 մլն դրամ: Նույն կերպ հաշվարկվում են բոլոր միջոցառումների ԿԲՆ կշիռները և գնահատվում ԿՓ առնչվող ծախսերի մեծությունը: Այդ գնահատականների հանրագումարի և բյուջեի ընդհանուր ծախսերի հարաբերակցությունը կհանդիսանա կլիմայական ծախսերի գործակցի մեծությունը:

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԿՇԻՌՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ) ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հավելված 2. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ՝ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԴԱՍԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Օրինակ 1.

Ծրագիր՝	**1155 Բնական ռեսուրսների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում**
Միջոցառում՝	**11004 «Սևան» ազգային պարկի կառավարում**
2025թ. պետբյուջեով հատկացված գումարը՝	**165,089 մլն դրամ**

Քայլ 1. Միջոցառումը ներառում է «Սևան» ազգային պարկի տարածքում գիտական ուսումնասիրությունների և անտառատնտեսական աշխատանքների իրականացում: Այս միջոցառումը պատկանում է կլիմայի փոփոխության հարմարվողականության խմբին, քանի որ՝

ա) այն չի հանգեցնում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման կամ դրանց կլանման ընդլայնմանը (այսինքն, այս աշխատանքները չեն հանգեցնի ԿՓ մեղմման), և

բ) թույլ կտան կլիմայի փաստացի կամ կանխատեսվող փոփոխության պայմաններում նվազեցնել վնասները և մեղմել ԿՓ անբարենպաստ հետևանքները:

Հետևաբար, այս միջոցառման կլիմայական կոդի առաջին նիշը **2** է:

Քայլ 2. Միջոցառումը, համաձայն Աղյուսակ 2-ում ներկայացված ոլորտների դասակարգման, պատկանում է «Բնական էկոհամակարգեր և կենսաբազմազանություն» ոլորտին, որի դասիչի երկրորդ նիշը **1** - ն է: Քայլ 2-ի արդյունքում միջոցառման կլիմայական դասիչը կունենա **21XXX** տեսքը:

Քայլ 3. Միջոցառումը նախորդ 2 քայլերի արդյունքում դասվել է ԿՓ հարմարվողականությանն ուղղված Բնական էկոհամակարգեր և կանսաբազմազանության ոլորտի միջոցառում: Աղյուսակ 3-ում Հարմարվողականության բաժնում Բնական էկոհամակարգեր և կենսաբազմազանություն կոչվող խումբը բաժանվում է հետևյալ ենթախմբերի կամ ենթաոլորտների՝

Անտառներ	211
Բնական կենսավայրերի պաշտպանություն	212
Պաշտպանություն անապատացումից	213

Ակներևաբար, «Սևան ազգային պարկի կառավարում» միջոցառումը համապատասխանում է Բնական կենսավայրերի պաշտպանություն ենթախմբին, հետևաբար, դասիչի երրորդ նիշը **2** - ն է, իսկ ամբողջական դասիչն այս քայլի արդյունքում կունենա **212XX** տեսքը:

Քայլ 4. Միջոցառումը ա) ներառված չէ Հարցաշար 1-ի Ծանոթագրություն 1.1-ում նշված փաստաթղթերում, բ) համաձայն 2024թ. պետական բյուջեի մասին օրենքի՝ 1155 բյուջետային ծրագիրը նպատակուղղված չէ ԿՓ մեղմմանը կամ հարմարվողականության բարձրացմանը:

Հետևաբար, այս միջոցառումը չի կարող դասվել կլիմայի փոփոխությանը ուղղակի առնչություն ունեցող միջոցառումների խմբին:

Այդուհանդերձ, միջոցառումը նպաստում է ԿՓ նկատմամբ խոցելիության կրճատմանը՝ ավելացնելով հարմարվողականության կարողությունը՝ ազգային պարկի տարածքում բնական կենսավայրերի պահպանման միջոցով:

Հետևաբար, այս միջոցառումը **բարձր առնչության խմբի** միջոցառում է, ինչը նշանակում է, որ այս միջոցառման կշիռը կսահմանվի **50-75%** միջակայքում:

Քանի որ բարձր առնչություն ունեցող միջոցառումների խմբի դասիչի 4-րդ նիշը **2**-ն է (տե՛ս Աղյուսակ 4), համապատասխանաբար այս միջոցառման դասիչը կունենա **2212X** տեսքը այս քայլի արդյունքում:

Քայլ 5. Միջոցառումը, ԿՓ ծախսերի տիպաբանության (Աղյուսակ 1) համաձայն պատկանում է ԿՓ բարձր առնչություն ունեցող միջոցառումների խմբին: Խմբի ներսում կշռի մեծությունը որոշելու համար անհրաժեշտ է պատասխանել Հարցաշար 2-ի 3.1. հարցին, այն է՝ **արդյոք միջոցառումն ապահովում է ԿՓ մեղմման և հարմարվողականության համատեղ օգուտներ**:

3.1. հարցի պատասխանը բացասական է, քանի որ Սևան ազգային պարկի կառավարումը չունի ՋԳ կրճատման լրացուցիչ օգուտներ, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է պատասխանել 3.2. հարցին, այն է՝ արդյոք միջոցառումն ունի ԿՓ մեղղման չեզոքացնող ազդեցություն: Այս հարցի պատասխանը ևս բացասական է, քանի որ այս միջոցառումը չի նպաստում ՋԳ արտանետումների ավելացմանը: Հետևաբար, դասիչի վերջին նիշը **2** է:

Արդյունքում, 1155 ծրագրի 11004 միջոցառմանը կվերագրվի 22122 դասիչը, որի համապատասխան կլիմայական կշիռը 65% է:

Համապատասխանաբար, այս միջոցառման կլիմայական ծախսի գումարը կլինի.

165,089 մլն դրամ * 65% = 107,308 մլն դրամ

Օրինակ 2.

Ծրագիր՝	**1004 Ոռոգման համակարգի առողջացում**
Միջոցառում՝	**11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում**
2025թ. պետբյուջեով հատկացված գումարը՝	**7 000 մլն դրամ**

Քայլ 1. Միջոցառումը ենթադրում է ոռոգման ոլորտի սուբսիդավորում ՋՕԸ-երի համար սահմանված ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով, հետևաբար, համաձայն տիպաբանության այն պատկանում է կլիմայի փոփոխության հարմարվողականության խմբին, քանի որ՝

ա) այն չի հանգեցնում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման կամ դրանց կլանման ընդլայնմանը (այսինքն, այս աշխատանքները չեն հանգեցնի ԿՓ մեղմման), և

բ) թույլ կտա կլիմայի փաստացի կամ կանխատեսվող փոփոխության պայմաններում նվազեցնել վնասները և մեղմել ԿՓ անբարենպաստ հետևանքները:

Հետևաբար, այս միջոցառման կլիմայական կոդի առաջին նիշը **2** է:

Քայլ 2. Միջոցառումը, համաձայն Աղյուսակ 2-ում ներկայացված ոլորտների դասակարգման, պատկանում է «Ջրային ռեսուրսներ» ոլորտին, որի դասիչի երկրորդ նիշը **2** - ն է: Քայլ 2-ի արդյունքում միջոցառման կլիմայական դասիչը կունենա **22XXX** տեսքը:

Քայլ 3. Միջոցառումը համապատասխանում է Ջրային ռեսուրսներ խմբի Ոռոգման ապահովում ենթախմբին, որի դեպքում դասիչի առաջին երեք նիշերն են 223-ը: Հետևաբար, դասիչի երրորդ նիշը **3** - ն է, իսկ ամբողջական դասիչն այս քայլի արդյունքում կունենա **223XX** տեսքը:

Քայլ 4. Միջոցառումը ներառված է Հարցաշար 1-ի Ծանոթագրություն 1.1-ում նշված ռազմավարության մեջ, հետևաբար, այս միջոցառումը դասվում է կլիմայի փոփոխությանը ուղղակի առնչություն ունեցող միջոցառումների խմբին: Այսինքն, Հարցաշար 2-ի Հարց 1-ի պատասխանը դրական է, ինչը նշանակում է, որ այս միջոցառման կլիմայական դասիչի կլիմայական բաղադրիչի նիշերը **11** են: Դա, իր հերթին, նշանակում է, որ այս միջոցառումն ունի 100% կլիմայական կշիռ:

Համապատասխանաբար, այս միջոցառման կլիմայական ծախսի գումարը կլինի.

7 000 մլն դրամ * 100% = 7 000 մլն դրամ

Օրինակ 3.

Ծրագիր՝	**1001 Տարածքային կառավարման ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում**
Միջոցառում՝	**11001 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների քաղաքականության մշակում և ծառայությունների մատուցում**
2025թ. պետբյուջեով հատկացված գումարը՝	**1 589.3 մլն դրամ**

Քայլ 1. 1001 ծրագրի 11001 միջոցառումը ներառում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառում պետական քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման, պետական ծրագրերի մշակման, իրականացման, մոնիտորինգի, խորհրդատվության և աջակցության ծառայություններ: Այս միջոցառումը պատկանում է կլիմայի փոփոխության հարմարվողականությանը ուղղությանը:

Հետևաբար, այս միջոցառման կլիմայական կոդի առաջին նիշը **2** է:

Քայլ 2. Այս միջոցառումը, համաձայն Աղյուսակ 2-ում ներկայացված ոլորտների դասակարգման, պատկանում է Խաչվող հարցերի ոլորտին, որի դասիչի երկրորդ նիշը **7** է:

Քայլ 2-ի արդյունքում միջոցառման կլիմայական դասիչը կունենա **27XXX** տեսքը:

Քայլ 3. Աղյուսակ 3-ում Հարմարվողականություն բաժնում Խաչվող հարցեր խումբը բաժանվում է հետևյալ ենթախմբերի կամ ենթաոլորտների՝

Աղետների ռիսկի կառավարում	271
Կրթություն և իրազեկում	272
Քաղաքականություն և կարգավորում	273
Հետազոտություն	274

Ակներևաբար, այս միջոցառումը համապատասխանում է Քաղաքականություն և կարգավորում ենթախմբին, հետևաբար, դասիչի երրորդ նիշը **3** է, իսկ ամբողջական դասիչն այս քայլի արդյունքում կունենա **273XX** տեսքը:

Քայլ 4. Միջոցառումը ներառված չէ Հարցաշար 1-ի, Ծանոթագրություն 1.1-ում նշված փաստաթղթերում և, համաձայն 2024թ. պետական բյուջեի մասին օրենքի՝ 1001 բյուջետային ծրագիրը նպատակուղղված չէ ԿՓ մեղմմանը կամ հարմարվողականության բարձրացմանը:

Հետևաբար, այս միջոցառումը չի կարող դասվել կլիմայի փոփոխությանը ուղղակի առնչություն ունեցող միջոցառումների խմբին:

Այս միջոցառումը նպաստում է ԿՓ հանդեպ խոցելիության կրճատմանը՝ ապահովելով փոքր օգուտներ՝ վերականգնվող էներգետիկայի զարգացմանը նպաստող ծրագրերի մշակման միջոցով: Հետևաբար, այս միջոցառումը ցածր առնչության խմբի միջոցառում է, ինչը նշանակում է, որ այս միջոցառման կշիռը կսահմանվի 0-25% միջակայքում:

Քանի որ ցածր առնչություն ունեցող միջոցառումների խմբի դասիչի չորրորդ նիշը **4** է (տե՛ս Աղյուսակ 4), համապատասխանաբար այս միջոցառման դասիչը կունենա **2734X** տեսքը այս քայլի արդյունքում:

Քայլ 5. Այս միջոցառումը ԿՓ ծախսերի տիպաբանության աղյուսակի (Աղյուսակ 1) համաձայն պատկանում է ԿՓ ցածր առնչություն ունեցող միջոցառումների խմբին: Խմբի ներսում կշռի մեծությունը որոշելու համար անհրաժեշտ է պատասխանել Հարցաշար 2-ի 5.1. հարցին, այն է՝ արդյոք միջոցառումն ապահովում է ԿՓ մեղմման և հարմարվողականության համատեղ օգուտներ: 5.1. հարցի պատասխանը դրական է, քանի որ մեղմման օգուտների հետ մեկտեղ այս ոլորտի քաղաքականությունն ապահովում է նաև հարմարվողականության օգուտներ, հետևաբար, դասիչի վերջին նիշը կլինի **1**:

Արդյունքում, 1001 ծրագրի 11001 միջոցառմանը կվերագրվի 27341 դասիչը, որի համապատասխան կլիմայական կշիռը 25% է:

Համապատասխանաբար, այս միջոցառման կլիմայական ծախսի գումարը կլինի.

1 589.3 մլն դրամ * 25% = 397.3 մլն դրամ